Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին

10.06.2019թ ք.Երևան

Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Երևան քաղաքի Շենգավիթ բաժնի հարկադիր կատարող արդարադատության մայոր Արմեն Դարբինայնս, ուսումնասիրելով 10.06.2016թ. վերսկսված թիվ 02787065 կատարողական վարույթի նյութերը

ՊԱՐԶԵՑԻ

Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի կողմից 11.01.2013թ. տրված ԵՄԴ/0932/02/12 կատարողական թերթի համաձայն պետք է Գայանե Պողոսյանից հօգուտ <<Ակբա Կրեդիտ Ագրիկոլ բանկ>> ՓԲԸ-ի բռնագանձել 342710 դրամ և հաշվարկվող տոկոսները բռնագանձումը տարացելով գրավի առարգա հանդիսացող ոսկյա իրիերի վրա:
Պարտապանից պետք է բռնագանձել նաև բռնագանձման ենթակա գումարի 5%-ի չափով ՀՀ դրամ գումար՝ որպես կատարողական գործողությունների կատարման ծախս:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28, 43 հոդվածներով և «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 35.1-35.4 հոդվածներով

ՈՐՈՇԵՑԻ

Պարտապան Գայանե Պողոսյանին պատկանող ներքոհիշյալ գույքը՝

h/h	լոտի անվանումը նկարագիրը	գույքի քանակը	գնահատման գինը	մեկնարկային գինը
1	Ոսկյա մատանի ամուս՝ 950 հարգ 5,5 գրամ	1 հատ	107.200 դրամ	80.400 դրամ
2	Ոսկյա մատանի տղամարդ 583 հարգ 7,6 գրամ	1 հատ	91.200 դրամ	68.400 դրամ
3	Ոսկյա շղթա՝ 583 հարգ 11,8 գրամ	1 հատ	141.600 դրամ	106.200 դրամ
4	Ոսկյա խաչ՝ 583 հարգ 2,8 գրամ	1 զույգ	33.600 դրամ	25.200 դրամ
5	Ոսկյա կախազարդ՝ 583 հարգ 3,8գրամ	1 հատ	45.600 դրամ	34.200 դրամ

ներկայացվում է հարկադիր էլեկտրոնային աճուրդի, էլեկտրոնային համակարգի կիրառմամբ՝ հարկադիր կատարման ծառայության աճուրդի էլեկտրոնային կայքի՝ **harkadir.ajurd.am** միջոցով:

Հարկադիր էլեկտրոնային աճուրդի սկիզբը՝ **29.07.2019թ.:**

Որոշման պատճենը ուղարկել կողմերին

Որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ Վարչական դատարան կամ վերադասության կարգով, որոշումը ստանալու օրվանից 10 օրվա ընթացքում:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրնքի 28 հոդվածի 5-րդ մասի համաձայն հարկադիր կատարողի որոշման բողոքարկումը չի կասեցնում կատարողական գործողությունները:

ԱՎԱԳ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՂ՝

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՅՈՐ Ա.ԴԱՐԲԻՆՅԱՆ

Ծ Ա Ն Ո Թ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Յուրաքանչյուր լոտի հարկադիր էլեկտրոնային աճուրդի ավարտի հաշվարկային ժամ է համարվում կայքում տվյալ լոտի վերաբերյալ ծանուցումը հրապարակելու 10-րդ օրվան հաջորդող աշխատանքային օրվա համապատասխան ժամը:

Յուրաքանչյուր չկայացած հարկադիր աճուրդից հետո՝ երրորդ աշխատանքային օրը, կայքում զետեղվում է կրկնակի հարկադիր էլեկտրոնային աճուրդի դրված լոտի մասին ծանուցումը:

Եթե աճուրդը չի կայացել գնորդ չլինելու կամ լոտի մեկնարկային գնի հավելում չկատարվելու հիմքերով, ապա հաջորդ հարկադիր աճուրդ կազմակերպելուց վաճառվող լոտի մեկնարկային գինն իջեցվում է նախորդ աճուրդի համար սահմանված մեկնարկային գնի տասը տոկոսի չափով:

Եթե աճուրդը չի կայացել գնորդի կողմից լոտի գնման գինը սահմանված ժամկետում չվճարվելու կամ առուվաճառքի պայմանագիրը չստորագրելու հիմքերով, ապա լոտի մեկնարկային գնի իջեցում տեղի չի ունենում:

Հրապարակային սակարկությունների մասին » ՀՀ օրենքի 35.4 հոդվածի 4–րդ և 5–րդ մասերի համաձայն երկրորդ և յուրաքանչյուր հերթական աճուրդից հետո, լոտը/ գույքը /չվաճառվելու դեպքում պահանջատերը աճուրդի ավարտից հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում իրավունք ունի պահանջի դիմաց այն ընդունելու այդ աճուրդի մեկնարկային գնով:

Պահանջատերը պահանջի դիմաց լոտը իրեն հանձնելու վերաբերյալ գրավոր պահանջը կարող է ներկայացնել ԴԱՀԿ ծառայություն մինչև չկայացած աճուրդից հետո երկրորդ աշխատանքային օրվա ավարտը: